

մահու եղել ինձ պատճառ չմնալոյ աստ: Ուստի յ30 օգոստոսի զինի ճաշին մատուցանելով սոցա զեմ լիարերան օրհնութիւն դիմեցի ի Գ.էր+ զիւղն, որ է սարի ոտն շնուած հինգ վերստ հետի այս զիւղից:

(Մահացութեան և յաջորդ աշակերտութեան)

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻԵԱՆ ԿԵՆՆՔԻ ՏԱՐՐԵՐԸ, ԿՈՅՄ ՇՆԴԱՆԱՀԻ-ՌԻ-ՆԻ-ՆԻ-ՆԵՐԸ և ՌԵՐ-ՌԻ-ՆԻ-ՆԻ-ՆԵՐԸ պայլագի սասահանելով հայեցածածութեան (Ալուանութը զիւցութի և Ա-դու-դու-դու ձաւը հասունի). ապա մի համարուս խորհրդածութեան մեջ պարբեցնելու և մո-նեան միջն պարբեցնելու և մո-նեան միջն վերաբերութեան:

Մեր կարդացող հասարակութեան մեծ մասը, մանաւանդ մեր ուսումնական դասը, եթէ այս բառը անտեղի չեմ գործածեր, չայերի ժողովրդական կեանքի հետ զրեթէ ծանօթ չէ: Մի կողմանէ այս մըտածմունքը զրդեց ինձ զրել այս յօդուածը, միւս կողմանէ հետաքրքիր երեաց ինձ յիշեալ երկու Եւրոպացի յայտնի ուսումնականների չայերի կեանքի վերայ արած զիտողութիւնների հետ ծանօթացնել մեր հասարակութիւնը:

Չայերի բարոյական կեանքը, նոցա ընտանեկան յարաբերութիւնները ճանաչող Եւրոպացի ճանապարհորդները զրեթէ միւնոյն խորհրդածութիւնները և նկատո-

ղութիւնները կանեն: Մանաւանդ մինկատողութեան մէջ բոլորովին կհամաձայնին միմեանց հետ: \*Եռքա կը պնդեն որ չայերը իրանց կեանքով ու վիճակով չըեից նման են: \*Եռցա նման հին ժողովուրդ, նոցա նման սփոռուած երկրիս ամեն ուղղութեամբ, նոցա նման կրօնի պատճառաւահալածաները կրած, նոցա նման արծաթաթակալ: (Երանի՛ թէ նոցա նման արծաթակալ ևս լինէին): Եւ իրաւ՝ ինչ հանգամանքների մէջ չայերը կապըն և ինչ միջոցներով նոքա իրանց կեանքը իրեւ հպատակ ժողովուրդ կապահովացնեն՝ (վաճառականութեամբ) նման են չըեից: Բայց չայերը իրանց բարոյական կեանքի ուղղութեամբ ըստ իմ՝ այնքան կը տարբերին չըեաներից, որքան իրանց միւս հարեան ազգերից: Եյնու ամենայնիւ այս խնդիրը վիճարաններու շատ ընդունակ համարելով, մի կողմը կը թողնեմ այն ապացոյցի կարօտ խօսքերով բաւականանալով, և կաշխատեմ այժմ շատ տեղբառ առբառ գրել յիշեալ ճանապարհորդների արած զիտողութիւնները չայերի կեանքի վերայ:

Գերմանացի զիտնական երկրագործ Ազեքսանդր Պետցոլդը, չայաստան պտըտօղ ուսումնական ճանապարհորդներից ամենանորը, այսպէս կը զրէ չայերի վերայ\*):

(\*) Այս զիտնականը Ռուսահայաստանն է ճանապարհորդել Այս զիտքը՝ որից ես հետեւեալ նկատողութիւնները կը քաղեմ և որ Առվելասեաննահանգների բնապատմական, ժողովրդական տնտեսութեան և ժողովրդների բարքի և սովորութիւնների նկարագրութեան բովանդակութեամբ բաւականին հետաքրքիր է, կ'անուանի Տէր Կայութիւն երկու հատողի բաժանած: Այս զիտքը 1868 թուականին է ըստ տեսել:

“Յայտնի է որ Հայերը ամենահինքաղաքակիրթ ազգերն կը պատկանին, որոնց պատմութիւնը մինչեւ մարդկային ցեղի դիցաբանական հին դարը կը հասնէ: Եռաջ մի զօրաւոր ազգ, քաղաքականապէս ուրիշ ազգերի վեճակը վճռող, այսօր նախքաղաքական բոլոր անկախութիւնները կողը է:,, Առանից յետոյ Ե. Պետցոլդը Հայերի և Հրէաների մէջ մեծ նմանութիւն գտնելով, որ առանց ապացոյցի է թողել (բաւականալով միայն աշխարհի ամեն կողմի վերայ ցրուած լինելը և իրանց բուն հայրենիքի մէջ սակաւաթիւ և օտարների հետ խառն բնակելը յիշելով), ապա Հայերի բնական կազմութեան վերայ մի քանի խօսք կը գրէ, նոցա գեղեցիկ ու գեղակազմ ժողովուրդների կարգը դասելով:— Հայերի մտաւոր ու բարոյական յատկութիւնների վերայ հետեւեալ կերպով կը գրէ:,, Մտաւոր ձրքի կողմանէ, ոչ մինը Կովկասի ժողովրդներից Հայերից չեն գերազանցել: Հայը հանդարտ, բաց և ուրախ բնաւորութիւն ունէ. և չը նայեցեալ նորաբոլոր տգիտութեանը, այնու ամենայնիւ առաւել մեծ հանձարի և առաւել սուր հասկացողութեան տէր է քանթէ իր Վը բացի և Օսմանար դրացիները: “Կա առաւել աշխատասէր է և գործունեայ՝ քանթէ Պարացին\*). և չը նայեցեալ նորա բնութեան մեծ ընդունակութեանը, դիւրակորութեանը կամ կակղութեանը, նա խիստ

(\*) 2է ասել և քան թէ Թաթարները. որով հետեւ մի ուրիշ տեղ (Բ. Հատոր, երես 116—117) կը պնդէ որ Թաթարները Կովկասի յառաջակիմութեան և լուսաւորութեան մէջ առաւել մեծ դիր են խաղառ, առաւել ընդունակ Կովկասի մէւս ցեղերից շատ զարգանալու: Ի՞նչ կիմքով կը

յամառութեամբ իր նախնեաց վարքը և սովորութիւնը կը պահէ: Հայը կը գերազանցի նմանապէս հիւրասիրութեամբ և շատ զարգացած նահապետական ընտանեկան կեանքով:,, Առանից յետոյ կը կարծէ Պետցոլդը որ Հայերի զարգացած և հարուստ դասի մէջ հանձարաւորութեան բարձրագոյն աստիճանի նշան է՝ նոցա ձրգտումն դէպի հիմունքիւն: Եռանձնապէս կը սքանչանայ Հայի օտար լեզուներ դիւրաւ սովորելու ընդունակութեան վերայ, օրինակ բերելով մի Պօլսեցի Հայ երիտասարդ, որ իր հետ կը ճանապարհորդէր, և երկու շարաթիմէջ իւր Վերականութեան՝ Բառզրքի և ընթերցարանի օգնութեամբ Վերմաներէն լեզուի մէջ զարմանալի յառաջադիմութիւն ցոյց կըտար: “Ես հաւասարի եմ կ'ասէ Պետցոլդը, որ այն երիտասարդը մի ամսուայ մէջ ամեն Վերմաներէն խօսեցածը կը հասկանայ . . և մի քանի ամսուայ մէջ անշուշտ կատարեալ Վերմաներէն կիմանայ:,, Մի երկու խօսք ևս Հայերի զինուորականութեան ընդունակ լինելուն վերայ գրելով, կընքէ իր ընդհանուր կարծիքը Հայերի լաւ յատկութիւնների վերայ՝ յաւելացնելով թէ Կ'երեւայ որ բոլորովին յաջող կամ նպաստաւոր է:,, (Առողե ասել ընդունակ և յառաջադեմութեան յոյս տուօղ ժողովուրդ է: ) “Բայց, կը շարունակէ Վերմանացի զիտնականը, չը

պնդէ այս, ինձ անհականալի է. որովհետեւ առաւել երկրագործութեամբ և անսամնապահութեամբ կը պարապին Թաթարները քան թէ միւս ժողովրդները. Այս միակողմանի հայեցուածք կ'երևայ ինձ, Բացի այս Պետցոլդը ինքնիրան կընդիմախօսէ, առաջին Հատորի մէջ Հայերին Կովկասի ամեն ժողովրդներից ընդունակ ու հանձարաւոր ընդունելով

պետք է և ստուերները այս նկարած պատկերի առանց նկատողութեան թողնել։ Պետք է զանազանել այ դիւղականին՝ քաղաքաբնակից։ Այն ինչ առաջինը այի բնաւորութեան լաւ յատկութիւնները բաւականին մաքուր է պահպանել, երկուրդը շատ քիչ։ Վիստու, որ քաղաքաբնակը այի բնաւորութեան մի քանի համբաւելու արժանի կողմերը ձեռքից ձգել է, նորա հասկացողութեան առաւել մեծ սրութիւնը նորան սառն ու հաշուօղ կ'անե։ Այի դիւրակորութիւնը, ճարավիկութիւնը մի սողուն էութեան (անարգութեան)՝ կատածաւորութեան և խարդախութեան կը փոխուի, աշխատասիրութիւնը և զործունեութիւնը կը հրապուրէ, նորան շահ կամ ստացուածք ձեռք բերել, ուր դիւրին է օրինաւոր շահի (գաղումի) սահմանից անցնել, որով շահը կամ ստացուածքը խարեւութիւն կը դառնայ։ Որանով հասկանալի կը լինի այն վատ համբաւը, որ քաղաքաբնակ այերը, այն ևս ոչ միայն կովկասի մէջ՝ ստացել են։, այ վաճառականների խարեւայութեան օրինակ կը բերէ մի Լօնտօնցի վաճառականի անբաւականութիւնը՝ որին Կուխի մետաքսավաճառութեան մէջ խարել են։ Կը միայն այս օրինակի վերայ հիմուելով այ վաճառականներին խարդախ և անարդ տիտղոսներով կը պատուէ Պետցօլդը, այն ժամանակը շատ ցաւալի չէ։ Վ. յապէս խիստ չէ նկարագրեր պառւի այերի շահասիրութիւնը, նորա կարծիքով՝ այերը յաջողութեամբ, հաստատութեամբ, իմաստութեամբ և ճարպիկութեամբ իրանց նպատակին են հասել—յառաջացել։ “Եւ այս նկատմամբ, ըստ նորա, այերը արեւելքի քրեաներն են,

ամենից առած և անարդած (°), այնուամենայնիւ ամենքն անհրաժեշտ, :

Ե. Պետցօլդը քանի մի խօսք ևս այսոց հին կառավարութեան վերայ զրելով, կը յիշէ որ աւատական նուիրապետութիւնը այերի մէջ զարգացման չէ հասել ինչ պէս Վ. բացիների։ այերը սարուկներ չունեն, միշտ ազատ մարդիկ էին և մինչեւ այս ժամը մնացել են այսպէս։ “այսատանի մէջ երբէք չըկար այնպիսի սահմանադրութիւն, որով ժողովաւրդը Վ. բացիների նըման մի որոշ՝ քաղաքական, մինը միւսին ստորագասօղ կարգերի կամ գասերի բաժանուած լինէր. այերի հին տէրութիւնը մի ուրիշ հիմքի վերայ եր կառուցած քանիթէ աւատական կարգի։ Յէկե այսատան վազուց է դադարել իրեւ տէրութիւն մնալ, և այերը զրէթէ երկրիտ ամեն մասերի վերայ սիռուել, այնու ամենայնիւ այն հին տէրութենական հիմքերը կենդանի են մնացել, այն է եկեղեցին և ընտանեկան կեանքը։”

“Ինչպէս յայտնի է արդէն մեր թուականի Ֆդդարին այերը բաժանուեցան առովմէական եկեղեցւոյ և այս հերձուածի հետեւակով մի առանձին եկեղեցի կազմեցին\*” ա-

(\*) Պ. Պետցօլդը՝ միմիայն պապապաշտ և մեր եկեղեցւոյ թշնամի ոմանց հաղորդած սիալ տեղեկութեանց վերայ հիմուելով՝ ի զուր կամի արատառորել այսատանեաց Եկեղեցին՝ իրը թէ երբեմն հերձուածի մէջ անկեալ է, որ մեր Եկեղեցւոյ համար սկսեալ ի հաստատութենէն ի ձեռն Առաքելոց երբէք և երբէք պապիամ մի բիծ կրպցնելու առիթ պատահած չէ, և թէ միշտ ազատ մնացած է որևիցէ օտար ազգեցութեանց և մոլորամբ որոգայթերից վեաներէն՝ միշտ պարզութեան հետևելով և երեք տիեզերական նախնի ժողովք ընդունելով։

ուանձին զլիսով՝ որ Պատրիարք (Կաթուղեկոս) կանուանի: Եյսեկեղեցին, որ ինք իր մէջ հերձուածական շփմանէ և բաժանմանէ պատ չըմնաց, այս եկեղեցին մի անհաւատալի յամառութեամբ մինչեւ այսօր պինդ պահեցին, և նա (եկեղեցին) է որ կտոր կտոր եղած Հայերը երկրիս ամեն մասերի մէջ հասարակաց կապով կը բռնէ, ամեն Հայի մէջ այն գաղափարը արթուն սկահելով, որ թէ և նա հեռու հեռաւորութեան մէջ, այնու ամենայնիւ Հայաստանի մէջ մի հայրենիք ունի, որի քաղաքական զօրութիւնը այժմ թէ և հանգելէ, բայց չը նայեցեալ սորան՝ յիշելով նորա առաջին պայծառութիւնը և հին մեծութիւնը՝ նորա համար թանկագին է:,, Բայց ճշմարտութիւնը խոստովանուելով՝ այս վերջին տողերը չափազանցութեամբ զրուած են և միայն Պետցողի ողերութեան ծնունդ: Միթէ լապտերներով որոնելու չեն այնպիսի Հայ անհատներ՝ որոնք մեր երկրի եղած չեղած պայծառութիւնը զիտեն և որոնց համար մեր հայրենիքը թանկագին է: Պարաստանի Հայերից քանի քանի անդամ լսած եմ, որ չը զիտեն Հայաստան ո՞ննէ, ի՞նչ բան է, որոնց Հայերէն բառերը օտար են: Չեմ յիշեր Խւրոպիոյ դաղթական Հայերը: Եյսպիսիները ոչ թէ հազուա-

նաև մեր եկեղեցին արդէն անդրանիկ ծառումը ընդունելով ի Քրիստոսէ՝ ուրեմն օտար կամ այլ եկեղեցւոյ իրաւասութեան և իշխանութեան ներքեւ նմթարկուած չէր, ուստի և հարկ չոկար ուրիշ եկեղեցին իրու հերձուած բաժանուելու: Եյս եղած է բաժանումն մեր մէջ, որ մի փոքր մաս հերձուած և մոլորուած է ի մեր ու Եկեղեցւոյ օտար որոգայթից մէջ խարկանօք զլորուելով . . . :

դիւտ են, այլ մեծ մասը մեր բազմութեան կը կազմեն:

Ե. Պետցողիը Հայերի և Հրէաների մէջ մի զուգահաւասար դժելով, վերոյիշեալ մասձմունքը՝ որ Հեղինակի ողերութեան առանց աւելորդ ծէսերի և վարդապետութիւնների (որոնք յետոյ ծագեցան)՝ քրիստոնէութիւն ունեին և զրեթէ միւնոյն եկեղեցին կը կազմէին: Իսկ եթէ ժամանակով մի քրիստոնեայ հասարակւթիւն՝ կամ Ճիշդ ասել մի հասարակութեան հոգեորականութիւնը զանազան ծէսեր և վարդապետութիւնները յօրինէ և ստիպէ՝ որ իր ժողովուրդը ընդունէ նոցա իրրեւ պատգամ ի վերուստ իջեալ, և միւս քրիստոնեայ հասարակութիւնները անտարբեր մնան դէպի այն փոփոխութիւնները, շարունակեն պահել իրանց սկզբնական վարդապետութիւնները և աւանդութիւնները, չի նշանակի որ սոքա նորանից բաժանուեցան ու հերձուած կազմեցին: Եյսպէս և Հոյկական ու Հռովմէական եկեղեցիները: Եռաւել Ճիշդ էր ասել Հռովմէական եկեղեցին Հայերի եկեղեցուց բաժանուեց ու հերձուած կազմեց, քանիթէ ընդհակառակը: Հայերի եկեղեցին ինչպէս կազմուել է իւր լուսաւորիչների ձեռքով՝ կը շարունակէ մինչեւ այս օր այնպէս, և ամեն խորհօղի՝ Հայի ներկայ վիճակը ծնունդ անուանեցի, նմանապէս Հրէաներին յատուկ համարելով. միայն մի զանազանութիւն կը զանէ, այս երկու ժողովուրդների մէջ: “Հայերը՝ կամ՝ Խջմիածնի Գաահակալ Պատրիարքի (Կաթողիկոս) մէջ կենդանի և տեսանելի նշան ունին, որի շուրջը իրրեւ մի համապատկան ժողովուրդ, թէ և լոկ դաղափա-

բով և մաքով ժողովուել կարող են, որից ձրեաները զուրկ են: Այս իդեալական (գաղափարական կամ մտացածին) միութեան\* ) կամ համապատկանութեան զգացմունքը շատ բարձր գնահատութեան արժանի է: Այս զգացմունքը երեսոյթների մի խումբ յառաջ կը բերէ, որոնց մի բաւարար մեկնութիւն տալ չէ կարելի եթէ մարդ այս բովին (զգացմունքը) ուշադրութեան տակ չը ձգէ, օրինակի համար՝ այն փոխադարձ մտերմութիւնը՝ որ բոլորովին օտար և կեանքի մէջ այլայլ տեղ բռնող ձայերը խորյն միմեանց ցոյց կը տան երբ օտար աշխարհի մէջ իրարու կը հանդիպին, այն փոխադարձ օգնութիւնը, որ մի ձայ միւսից դիւրաւ ստանալ կարող է ելն: Այս հայրենակից գտնելուն լոկ ուրախութիւնը չէ՝ կամ մարդասիրութիւնը՝ որ մէկին կը զբգէ միւսին նեցուկ լինիլ, այս զգացմունքը սորանից առաւել է, որ այսպիսի գեպքերին ինչպէս ձրեաների մէջ, նոյնպէս և ձայերի, միայն սոցա մէջ առաւել կենդանութեամբ և եռանդով կերեայ:

,,Խնչ որ ձայերի երկրորդ հիմնական սիւնին կը վերաբերէ—ընտանեկան կեան-

(\*) Ճանաչողի համար՝ նորա ազդային դցութիւնը ցանկացողի համար՝ սուրբ պարտք պէտք է լինի նորան պահպանել այնպէս: Նորան անհաւատարիմ մնալ կիշանակէ ազգութիւնը զոհիլ: Դա ազդային եկեղեցի է և ցանկանք որ մնայ այնպէս՝ ըստ մոռանալով այնու ամենայնիւ օտարութիւնը ձէսերից՝ տգէտ հոգևորականն' զից ներս բերած նախապաշտմական սովորութիւններից նորան մաքրել, որ մնաւոր զարգացման խոշընդուն չը լինի: Եւ այս եկեղեցւոյ մաքրութեան ու ճշմարտութեան պաշտպանութիւնն է և ոչ նորաձեռութիւն կամ վերանորոգութիւն:

քին՝ նա իր առանձնացած պարզ նահապետական ձեր բոլորովին անփոփոխ պահպանել է, և ես Ենդրա-Կովկասեան ճանապարհորդութեանս ժամանակ, ձայերի բարք ու կեանքի եղանակը նկատելիս՝ անթիւ անգամ շատ կենդանի կերպով յիշել եմ այն նահապետական կեանքը՝ որ Աստուածաշնչի հին կտակարանի մէջ կը նկարագրուի: Իմ մոքից անգամ չի անցներ բացարձակ գովարան լինել այսպիսի կեանքի. վասն զի նորա վեասակար ազգեցութիւնները ևս չեմ ուրանար: Բայց այնու ամենայնիւ ինձ այս հիմնարկութեան մէջ առաւել լոյս քան թէ ստուեր կերեայ. և այն խորհրդածութիւնը միշտ ինձ կը շփոթէ, կը տրամեցնէ՝ որ վերջապէս այս տեղ ևս այն ժամանակը կը համեէ, ուր կտակարանական ընտանեկան կեանքը կանչետանայ, և այն ընտանեկան կեանքը՝ որ տեղ կը յաջորդէ՝ որ արդի քաղաքակիրթ ժողովրդների մէջ կը տեսմնեք: Ի՞նչ որ կամին թռող ասեն սորա զէմ. բայց այսքան կը խոստովանի ինձ հետ ձայերի ընտանեկան կեանքին ծանօթ անձը, որ նա այնպէս պարզ է ինչպէս սկզբնական և ըրնութեան օրէնքին համաձայն. այս պատճառաւ ևս ինչպէս մարմնաւոր նոյնպէս և հոգեւոր կողմից առողջ է, որ միենոյն պահպանութեամբ մեր արդի քաղաքակիրթութեան ընտանեկան կեանքի համար պնդել չէ կարելի:::

Կմկարծիքս այս նկատողութիւնների վերայ յայնելուց առաջ թոյլ տուեք ին ձ մի ուրիշ ուսումնականի ձայերի վերայ արած դիտողութիւնները և խորհրդածութիւնները յառաջ բերել, որոնք վերայգրեալներից առաւել ուշադրութեան արժանի են:

Առողուտատ Հաքստհառւդն Գերմանացի հոչակաւոր ճանապարհորդը, որին Պետցօլդը իր աշխատութեան մէջ յածախ յարդանքով կը յիշէ և որից օգուտ կքաղէ, Կերսէս ԱՇի կենդանութեան ժամանակը Հայաստան կը ճանապարհորդէր. և Հայերի բարոյական ու մատաւոր յատկութիւնների վերայ մեծ ուշադրութիւն դարձնելով՝ նոցա մէջ կապրէր և կուսաներ նոցա կեանքը:

„Հայաստան, կասէ Հաքստհառւդն, մարդկութեան սկզբնական սպատմութեան աւանդութեան համար աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մէկն է: Ծառ ժողովուրդների աւանդութիւնները ցոյց են տալի՝ որ այս տեղեց են ազգերը՝ մանաւանդ Եւրոպական՝ դուրս քաշուել և իրանց այժմեան բնակութեան տեղերը բանել: Պատմական ժամանակները այս երկիրը մի մեծ կնճիռ էր, և ազգերի ճանապարհ աշխարհի մեծամեծ տիրապետութիւնների համար: Այս տեղ են մզել սպատերազմները Եսիական աշխարհակալութեան, այս տեղ են ճակատել Ասորիք՝ Մեղաց, Մեղացիք՝ Պարսից, Պարսիկք Յունաց հետ: Այս տեղ էր ճակատատեղին Հռովմայեցւոց և Պարթեաց: Այս տեղ (Կեհավիտի մօտ) կը պատերազմին Երաբացիք, և արեւելքի աշխարհակալութիւնը իրանց ձեռքը կառնելին, և դարձեալ այս տեղ վառուած ոտիր կը կանդնելին ժողովուրդներ, որոնք Խալիֆայութիւնը կը կործանէին: Եւրոպայ մինչեւ այս տեղ կը թափանձեր (Խաչակիրների ժամանակ): Այս դռներով կը թափանձելին Ո՞նզօլները և թագթարները, Զինզիս խանը և թէմբըլանը (Անկ-

թէմուր): Այս տեղ էր Ճակատատեղին հերձուած Վահմետականութեան, Արուխաների և Ծեփոների, և նորազոյն ժամանակները Վահմետականութեան և Քըրիստոնեութեան, Առուսաստանի, Պարսկաստանի և Թռուրքաստանի, :

Ի՞նչ դեր է ընկել ուրեմն այն ժողովորդին, որին այս աշխարհաթատրը հայրենիք է վիճակուել: Այս ժողովուրդը՝ այս ամենահին ազգը՝ արեամբ պատուականագոյնը՝ հոգւով մեծաշնորհը՝ մարմնով գեղակազմը՝ ինչպէս սակաւազգեր, երբէք բաւական հզօր և բազմաթիւ չեն եղել, որ աշխարհակալութիւնը իր ձեռքն առնէր և պահպանէր. ընդհակառակը՝ քիչ ազգեր կան՝ որ հազար տարիներով այնպիսի ողբերգական բախտ ունեցած լինին, այնպիսի արիւնաշեղ և ահսուելի ճընշումն ու ստրկութիւն կրելու հարկադրուած լինին, ինչպէս Հայերը, և մեծաւ մասամբ այնպիսի ազգերից՝ որ մատաւոր և մարմնաւոր նկատմամբ իրանցից շատ ստոր կանգնած էին, :

“Բայց կերևայ որ այս ժողովուրդը իր բախտի դարձակիւածին վերայ է կանգնած: Կորա հայրենիքի մէջ ստրկութիւնը վերացել է, կրկին շունչ կը քաշէ, և արդէն կարելի է նկատել մատաւոր շարժողութիւնը: Կորա մէջ անժխտելի ձգտումն է զարթել, Եւրոպիոյ մատաւոր մշակութիւնը իրեն սեփականել:

“Բայց մի փոքր մասը այս ժողովրդի իր հայրենիքի մէջ կը բնակի, այնինչ առաւել մեծ մասը բոլոր Եսիայ, Եւրոպիոյ մէծ մասերը և Եփրիկայ է տարածուել, և չը նայեցեալ այսպէս ցրուած լինելուն՝ ամենքը հայրենիքի հետ սերտ և պինդ կա-

պուած են: “Խոքա այնտեղում միայն իրանց ազգային միութեան կեղրոնն ունին, այլ և կրօնական: Եյս կեղրոնը, Էջմիածնի Պատրիարքարանուը (Ահա Հարան, Կաթուղիկոսարան)՝ մի ճշմարիտ մնալիք ոյժով կազդէ ամենի վերայ: Հայերը ամենախորին հաւատարմութեամբ և անխախտ պահեցին իրանց հայրենիքը, իրանց լեզուն, իրանց բարքը, Քրիստոնեութիւնը և նորա ազգային ու եկեղեցական կերպաւորութիւնը:

“Եթէ Ոռուսաստան իր ամեղերապատմական առաքելութիւնը (միսիօն) ուղեղ ըմբռնէ, այն ժամանակընա Հայերին այն կը շնորհէ, դէպ ի որ երկար ժամանակներից սկսած նոցա կարօտը կը ձգտի, այն է Տրանսունդան: Ոռուսաստան հենց այն պատ-

ճառաւ կարօղ է Հայերին ազատ թոյլ տալ իրանց ներքին դորձքերի մլջ, մանաւանդ մտաւոր յառաջազիմութեան, որովհետեւ նա Հայերի ամեն յարաբերութեամբ դէպի Ոռուսաստան ունեցած յօժարութեան վերայ՝ կատարեալ ապահով լինել կարօղ է: Ուաթարները իրրե Մահմետական՝ քիչ թէ շատ Ոռուսաստանի առաջին կասկածաւոր կ'երեան: Եյնինչ Հայերը Ոռուսաստանից ճշմարիտ և իրաւամբ շնորհակալ են. նա աղատեց նոցա մի անտանելի՝ կորացուցիչ ստրկութիւնից, որի տակ հէնց այն ակնթարթին կրկին ընկնել կարօղ են երբ Ոռուսաստան իր զօրաւոր ձեռքը նոցա վրից վերառնէ:

(ՄԱՅԻՍ ԷՅՎԵՐԵՐ)

## Բ Ա Ր Ա Յ Ա Կ Ա Ն

### Ա Ղ Ք Ա Տ Կ Ե Ա Ն Ք

(ՓՈԲԶԵԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ ԱԹԵԱՏ ՊԱՏԿԵՐ)

Այս երեսիդ ուրախութ սապէս + + հայը, Ձնուն դաւանական դեղու է հող որից առաջ էս..., Օ՛ննդ. Գ. 19:

Առեղծող Տէր՝ խոր և անհաս զարմանալի է Քո դործ,  
Օռուր է քննում մտածելով մահկանացուն բազմափորձ.  
Թա՞ղ նա մաշէ զիշեր ցերեկ Ք.ո դործերով զբաղված  
Ահերջում զլուխը խոնարհած կասէ. „Տէր փառք քեզ  
Աստուած,,:

Դողան երկինք, սարսափեցին ողջ արարածք հիացած  
Խսկ մարդկութեան համար հասաւքանի տխուր սուդ ու լայ,